**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**<<ԿԱՐՃԵՎԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ**

ՀՀ Սյունիքի մարզ, գ. Կարճևան, փողոց 4, շենք 6
Հեռ. /+374/ 93512919 Էլ. հասցե kartchevan@schools.am

Թիվ 101
14.11.2025թ.

ՀՀ Սյունիքի մարզպետի
աշխատակազմի գլխավոր քարտուղար
Է. Մարտիրոսյանին

Կարճևանի հիմնական դպրոցը տեղեկացնում է Ձեզ, որ հաստատությունում առաջացել է «Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն (զինղեկ 1 դրույք) թափուր տեղ: Խնդրում եմ հայտարարությունը հրապարակել 2025թ-ի նոյեմբերի 17-ին:

Կից ներկայացնում եմ հայտարարության տեքստը:

Առդիր՝ 1 թերթ:

Դպրոցի տնօրեն Ս.Պապյան

Scanned with CamScanner

**Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կարճևանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն (զինղեկ 1 դրույք)**

**առարկայի ուսուցչի թափուր տեղի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

**Փաստաթղթերն ընդունվում են 2025թ-ի նոյեմբերի 17-ից մինչև 2025թ-ի նոյեմբերի 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը,** բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025թ-ի դեկտեմբերի 1-ին՝ ժամը 13:00-ին,** Կարճևանի հիմնական դպրոցում, հասցե՝ գ. Կարճևան, փ.4,շ6: Տեղեկությունների համար զանգահարել 093 51 29 19 հեռախոսահամարով:

Scanned with CamScanner